ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2018թ. հուլիսի 13 N 78

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 8-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 1510-Ն որոշմամբ հաստատված հավելվածի պահանջները, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների 2018 թվականի առաջին կիսամյակի կատարողականի դրական արդյունքները՝ ***կարգադրում եմ .***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայողներին քաղաքացիական ծառայողների պարգևատրման ֆոնդից պարգևատրել համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետին՝ ենթակա է վճարման ընդամենը 2120666 /երկու միլիոն հարյուր քսան հազար վեց հարյուր վաթսունվեց/ դրամ:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ